

Ընդհանուր տեսութիւն մը վերոյենեալ երկու Յօդուած-
ներու վրայ:

Մեր ցարք ըստան Ալյասերումի կամ՝ Եղանականի
վրայ, հաստատուած է նախ՝ բրոգութիւններու կամ
փորձի վրայ, երկրորդ՝ մարդկային մորժի վրայ: — Այդ
բանի որ պր երկու վետերն այ կը ներըն Ալյասե-
րումը կամ ինքնանուննզ, այլ էն Հմարիտ դիմաս-
կան մը չի վասկեր սովորել թէ կայ ինքնանունդ:
Են յիշաքի, հման յաջ սակաւաթիւ մասաներու կամ
որ պան պաշտպաննեն, ինչպէս վերը յիշատակեցնեն և
ներքեցնը անծաց ցողորդեց: Սակայն չենց ուզեր կիրել
այս խնդիրը տառած մէջ թէ կայ ներմաստուած-
րուն մէջ քանի պարզուանիներուն և թէ նիւթապաշ-
տուենքն և ինքնանունդի հականակութերուն վեր-
ներ ինքնանունդի նկատմամբ, որոյ պիտի հաստա-
տուի Հմարութիւնը նոյն իսկ հականակութերուն
խոպերովը:

Թիմաս կը գրէ: « Փարաւական դիտութեան մէջ
ստուգային չմարտութիւն չկայ բայ զայ՝ թէ կամքը
առաջ կու զայ կենարի: Ալյասը իրողութիւններ ու-
նենալով մեր տախէն, իրէային բան պիտի ըլլայ՝ եթէ
պնդէ մէկը՝ որ բակուերիաներու խուրեր ինքնարեա-
րու ներ են: »

Վ. իրոք: « Դրական և ոչ մէկ իրուութիւն գլուխէր
որոյ հաստատուի թէ ինքնանունդ մ'նզան է: Ո՛հ որ
տար կը հականակի, երեն հականակ կ'եւլն դիտա-
կան և ոչ թէ ստուգաբարանը: » — Հենքել ու, որ-
շափ որ կը պնդէ ինքնանունդի հաստատութեան մա-
սին սակայն յական կամ կը խոսովանի հմարու-
թիւնը, ըսկայ պայտէ, և ինքնանունդի բոթերն
մինչեւ այսօր դրաման արդիւնք մը չունցան: »

Լիդրէ: « Մեր աշքին տեսութած կեանք կը սերի
միան ծնողէն. փարաւական իրաւունք մը բան շու-
նիք երեւակայելու իր թէ ի սկզբան կնօսուած յաս-
կուածն մ'նիմք եւ (նիմք) ներգրածութեանը են-
զոր հիմա չունիք: » — Ֆալքըն, ինքնանունդի նե-
մարութիւնը համար կընէ: « Չաս դիւրին և շատ աւ
անսեղի ։ »

Ա. Թոմասը (լուս Գելիին). « Գիտութիւնն բազմա-
թիւ անյազմերի փորձեր կամ փաստեր կու այս ինք-

նամուռանդի ենթագրութեան հակառակ, ինչպէս որ նոյնը
լոցինք այս աթոռի վրա բազմուն իմ սախորդիս,
Հիւուլիսի բրենեն: Մանրացննին հոռարկութիւններ
մին-
չեւ պայօթ կինաց սկրզնը ինանցը միայն գտաւ: » :

Դեռ կրանեց շատերը յեղատակէն, ինպիսիք են,
Միւլլեր, Գիւլիյէ, Վակներ, Հարդեյ, Թողուար վե-
րապյան յեղուանեները: Կէօթէյի խորով կիրենք այս
խորդիը, մերժելով ցագ պատցուած հմարութեան
հակառակ ուրար սուկ ենթագրութիւնները, որոնց մասին
գեղանդի ուրագը ըստ Ակօթէ: « Ենթագրութիւններն
սանսուի եղանքն են, զորս կը գործած ուսուցիչն ա-
շակերտները քացցնելու համար (Արակ վեճաներ. Գ.
Էջ 285: »

Հ. Ս. Ալբերտ



Օ Ս Ս Ի Ա Ն

Յ Ա Յ Ի Ե Ր Ա Վ Ա Լ

»»»»»»»»»»

Ն Ա Խ Ա Դ Ի Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պորրորդ օրուան նախրեաց զիշեր՝ Օս-
սիան կ'երգ իր քաղցրինները լեզոյի իի-
ձիք բոլ, և իր տարիսինները Եւիր-Ալի-
նի, Ասկար մօրք հետ: — Եւիր-Ալինի
սոսուերը կ'երեսի անոր, և կ'ըսէ քե Ասկար
իսիի բանուած և բշամի պահանորդներու
նես և յարութիւն վրա է: — Օսսիան կը
բայի յօնուրիսի իր որդույն: — Փիճազ կ'ել-
լիք, կը կանէ իր մարտինները և զանիք
Գօյի իր յանձնեկ. յետոյ կ'երայ կը կենայ
րրան մը վրա պատերազմը դիտեր հա-
մար: — Կախը կը սկսի. Ասկար, Օսսիանի
աշքին տակ՝ փառքերով կը ծածկուի: — Գօյ
կը յարանի Առարանի վրայ. բայց իր զո-
րութիւնը կը մասնիկ իր քաղցրիներ: — Փիճ-
ազ կը դրի Ասոյին բարդը գրաւերս համար
զանիքն իր պատերազմական երգերով: —
Առարան յալորդ կը հանդիսանայ, և կրաք-
րանները կը վանուին: — Փիճազ կ'իչնէ, կը
կեցրն զանոնք և կը վարէ դկա ի բշամին: —
Կուկույիլին, զոր իր կրանա բարեկամը և
կարրիչ բարդը գտած երես կրումա յիրան
վրայ, կը լու պատերազմին ազմուիր. կ'ոզէ
վազել Փիճազի քով և մեսնի խանուրդին

Խնդիրը չի լուծուիր: Այլ կ'երինայ, վասն դի, այս
ասեն պիտի չաղուուի. Ան սատութեան մէջ, որոք
երկրու վրայ կեանք սերեր ներ են, կեանք ուսից
առաջ եկեր է. որովհետեւ այդ սատութեան աւ մեր եր-
կրին պէս նոյն փափուաւելու կրցիւն: — Այսէն
կեանք միտք սկսեր է ըստա երերն վրայ: ըստա ան-
ձանութ սատութ մէտէ:

1. *Histoire de la création naturelle*, p. 247.
Բագա. Փարեց. 1884:

2. Հման. *Génération spontanée et Transformatio-*
nne, բանաբարք:

3. Հման. *Longévité humaine*.
4. Հման. *Սուրմանարիք նորովոյն բացման*. 1871:
5. Հման. *Hettinger, Apologie.*

մէջ, բայց իր բարեկամները կ'արդիին: — Կոսկուններուն յառութիւններ յետոյ, կը զրկէ կոսքի բարդը խնդակցեմ: Մորունեի բառապիմին:

20CC002.bf3

¶Վ, է ան՝ որ կիջնէ լեռնէն երգելով,
սբանչեղափառ՝ նման ծիրանի գօտիին՝ որ կը
սատիէ Լինտի ծաղկապատճ բառները:

Կոյսն է ան՝ որուն ձայնը սէր կը ներդնչէ.
Տոսկարի սպիտակ գուասրն՝ է՛ Մ՛վ զոն,
որ շատ անցամեմ ունկնդրեցիր իմ եղեւ-
րուս, զուն՝ որուն զողարիկ արցունցներուն
հոսիլք տեսայ ես, կու զան ներկայ ըլլալու
մեր պատերազմերուն, թէ մտիկ ընելու թա-
կարի բաջագործութիւններուն վեպերը՝

Ե՞րբ պիտի դադրիմ հառակելէ մին մինակ՝
կոսայի վուակներուն եղերը: Իմ ասքիներ
անցան ճակատամարտներու մէջ. և վիշտը,
աւաղ, կը պաշտրէ այսօր տխուր ծերու-
թիւնս:

Ո՞վ Մալոխնա, չեմ ես կոյը և Թթրշա-
մած միշտաբէք. այսօքս չեմ ես լաղիան և
Թռղլիք, երբ գեղանի Եւիր-Ալլինը կը սի-
րեր զիս. Եւիր-Ալլին, սեւահեր կոյը, ա-
նուշահոս ծոցով ինչպէս ձորակներու շա-
շանը. Հաղար զիցացներ կ'ընծայէին անոր
իրենց տիստերը. ան մերժեց անոնց սէրը.
Քաջարի մարտիկներու խոռոք մը քաշուեցա-
տրհամարհուած: Օսիխան միանի սիրուեցաւ:

Գացի գետ ի սեւ ալիքները կեղոյի, կը
աջ ստանալու համար. տասներկու մար-
տիկներ իմ աղջև, Մորունի դաշտերուն
արիստօնա զաւակները, կընկերէն ինծի
չիւրանէր բառննայի մնակտանո՞ հասան:

« Ուրիէ, ըստ ան, կու գան այս օտար բական գէնքերը։ Գիւղին չէ աշխառհակառ»

կել զեղեցիութինը՝ որ Երիխի տյշատի զիւցաները սերեցին Բայց երջանիկ եղիր զո՞նի փինապլան զաւակ. երանի այն կնոջ որ քեզի է պահուած: Եթէ տասներկու գեղեցիութիներ տանենայի, որոնց զիս իրենց հայր կոչվին, զանոնիք ընտրութեանու պիտի ձգիր, համբաւի Հռա, ահաւուոր զաւակ»:

Այսպէս ըստ ու բացաւ ծածուկ թաքրու-
առոց՝ ար կը հանգէր քինազակել Եփիր-
Ալլիինը, իր թրինային գեղր բարախել տուտ
մեր որիսենուն՝ պողպատին տակը, և մենք
ուխտեր թրինք թաճնոյի աղջկան համար։
Յանկարծակի, մեր զլուխներուն վրայ,
ըրբան զագաթը, երեւցաւ զոռոզ կորուակի
գունզը։ Հաւաք մարտիկ ունէր հետք, և
շաշչը կը փայլատակէր անոնց զէնիկրուն
ողիններով։ Հոն էխն լույս և Դուռն, պա-
տերազմի սպիններով ծածկուած, յետոյ կո-
ռուիքի ծառկազը, և անոնց հետ ջագս և քա-
ջայալը Փրեսկալը։ Հոն էք և Դայրոյ և
Թալա՛ պատերազմի ժայոր։ Երկաթը կը
նշողէր կորմակի ձեռքին մէջ, իր աշերը մի
մէջ պառած։

Օստիան առաւ իր հետ իր մարտիկներէն ութը Հոգի, քաջայանպազն Ռւլյոնը, մեծանեն Մուլլոն, աղնուական և շնորհալի Ավելաքան, Ալլան և ամենի Կերպայր և վայրաց Դումարիկիանը: Եւ ինչու համար զբեզ վերջինը պիտի անուանեմ, Ադար, որ այն առափ հռչակ աւնի Այսուենի բլոգներուն վրայ: Ուգար կը յարձակի Դալայի վրայ: կը փուլին մարդագետնին վրայ: Ուգար կը քաշէ սուրբ, և կը միէ զայն ինն անպամ Դալայի կը զերուն մէջ, թայց շուտով կը փոխով պատերազմին բախտը, երեց անգամ ծափեցի աէզովս Կորմակի վահանը, երեց անգամ իր աէզը չտիշախուեցաւ իմինիս վրայ: Անոնին անու պահան: Ենին անուամ մնանի

4. Քերթողը կը համարի որ Մալուխնա լեռ-
նեն կիջնէ լուսու համար Ոսկարի, իր խօսե-
ցեալին քաջազորութիւններուն վէպը Ա'երեւի
թէ Օսկարի գրգռյան մահունքն յետոյ, ան
միշտ ծերունի բարդին բայ Թեցած է: Այս
երգն անոր կը նուիրէ Քերթողը, ինչպէս իր
քերթուածներէն շատեան:

2. Յորչափ կը ննջէ Փինդալ, դործք՝ զիշե-
րուան պատճառաւ՝ առախս կը մայ: Խսիրան
կը ներմուծէ հսու պատմութիւնն իր՝ Եւրե-Ազ-
ինի հետ տարփանքներուն: Այս գրուազը կա-
րեւոր է հսու հետազյաց շատ մը անցքին հաս-
կնական համար:

զայն՝ բռնած արինաշաղախ մազերէն։ Կորմակի բարեկամները փախան։

ԱՌ այն ատեն, ոչ Մալուքիսա, պիտի համարձակէք բակ ինձի թէ օր մը, կոյր և հրանգուա, պիտի անցրնէի գիշերները լալով անպատի մը մէջ։ Այդ բասզը անշուշապէտը ունենար զինակուռ համեստ շրբ-ջազգեսափ մը և անյաղթելի բազուկի մը։

Բայց չեն լսուիր այլ եւս¹, լենայի մթին գայախն վրայ, ուափիներուն մրմանիր և բարգերուն ձայները։ Գիշերային հօվերը կը գլէին ուժնութեամբ, և ծեր կազնիները կը շարմէին զլխուս վրայ իրենց զողզաջնուն աերեւները։ Եւիր-Ալին կը զրաւէր միտքս, երբ իր գեղեցկութեան բոլոր ճաճանչներովը, և իր արտասաւթերը կապոյս աշբերով երեւցաւ ինձի իր ամպին վրան, և ակար ձայնով մը։

«Օսպիան, ըստ ան, երիր և գրկէ որպիս. աղաստէ սիրելի Ռուկարս, կաղնիին բոց Լուրսարի եղերը, կը պատերազմի Լոկինի որդիներուն հետո։»

Բաւաւ, և զուզուեցաւ իր ամպին մէջ։

ԶԾՆՔերս առի. աէս ինձ նեցուկ ընկելով կը թոշիմ. պողպատը որ զիս կը ծածկէ՝ կը հնչէ. էէ ձայնով կը կրնէի, ինչպէս սուզը էի վասանկներու ատեն, զիցացներու հին երգերը։ Լոկինի մարտիկները բացին հեռուէն սաքերուս ազմուկը, կը փախչին անսնը, և որդիս զանսնը կը հալածէ։

«Դարձիր, զաւակս, պոտացի անոր, զարձիր, ալ մի հալածեր թշնամին...»։

Կը հնազանգի ձայնիս և կը գառնայ, զգոսէ սանձէն որ կը պրկէ իր նորաբայս բաջաւթիւնը։

«Ինչո՞ւ համար, կ'ըսէ ինձի, կը կեցրնես բազուկս, մահը մեր բոլոր թշնամիները չհնձած ատակաւն, Գիտե՞ս գուն, որ վայրագ և ահաւոր կերպով յարձակեցան անսնը սրբույք և իր սիրելին՝ Փիլլանի վրայ։ Գիտե՞ս որ կը հսկին անսնը, ուշագիր գիշե-

րուան իսւճապներուն։ Մ'եր սաւերը անոնց մէ մէկ քանին ջարդեցին։ բայց, մըրկէն՝ Մ'օրայի աւազներուն վրայ մզուած՝ ծովուն ալիքներուն նման, այնպէս կը յարձակէին Լոկլինի մարտիկները Լենայի դաշտին վրայ. գիշերային ուրուականները ձախողակ ճիշեր կարձակէին, և ես անսայ փայլասակից՝ մատան կարապն կարապն մարթներուն։ Թաղոր որ արթնցընմեծ Մ'օրուենի թագաւորը, զայն որուն համար վտանգը ուրախութիւն է, որուն նայուած ըլլը սարապ կը ցանէ, որուն զինուած բարուկը կը զարնէ կայծակի նման։»

Քունէն ընդուստ արթնալով Փինգալ, կը կոթընէր Տրենմորի վահանին, այն հաշակաւոր զրացին, զօր իր նախնիքը իսրարու կ'աւանդէին երբեմն իրենց ազգաստոհմին պատերազմներուն մէջ։ Դիմացնը տեսած էր քունէն մէջ Ազանաբեկայի սզբացեալ սաւերը։ Եկած էր ան Ալկիանէն, և յարտաքայլ յառաջացած էր լենայի գայախն վրայ. զալցահար էր իր չէմքը, և այտերը՝ արցունքուա։

Շատ անգամներ, մէզէ քօղերուն մէջէն կուրս կը հանէ իր աժդայու ձեռքը, կը կարկուէ զայն Փինգալի՝ լրիկ և աշբերը մէկ կոզմ գարձնելով։

«Ինչո՞ւ համար Ստարնոյի գաւառը կ'արտասուէ, կ'ըսէ անոր Փինգալ հառաչելով. ինչո՞ւ այդ զալուկը գէմքիդ վրայ...»։

Սպաւերը անկերեայթ կ'ըլլայ հովերուն վրայ, և կը թողու Փինգալը մօվթին մէջ։ Եկած էր ան արտասուելու իր ազգին մարտիկները՝ որոնց պիտի ինային Փինգալի հարգածներուն ատակ։

Դիմացնը կ'ելլէ, և Ազանաբեկան իր մասաւումներուն մէջ կը տեսնէ ատակաւն, և իր լու Ռուկարի սաքերուն դրնգիւնը. կը նշանէ անոր վահանին շողիւնը, վասն զի նորածագ առաւուուն ճաճանչը կարած անցած էր արգէն Ռուլինի ծովերը։

«Ինչ կ'ըսէ թշնամին, կը հարցընէ Մորուենի թագաւորը։ Վախէն բռնուած՝ կը փախչի Ռուկանի ալիքներուն վրայէն, թէ

1. Քերթ. զը իր նիւթին կը գառն այ։ Կը յէլէ քնթերցուը ուր Փինգալ գրեկէվ իր Փիլլան որ-

ին, և Ուսկար Բառը թշնամին լրտեսելու, հրամայած էր իր բարգեւուն որ կրգէն։

նոր պատերազմի մը կը սպասէ՛ Բայց ի՞նչ
պէտք կայ հարցընելու. ասոնք անոր ձայ-
ներն են զոր կը բերէ ինձ առաւտեան հովը.
Ուկար, վազէ գաշտը, և արթնցաւը բարե-
կամներս ի մարս» :

Փինգալ՝ կեցած Լուբարի ժայռին քով,
երեք անգամ սարսափելի աղաղակ մը կը
ձգէ : Եղջերուն կը խայտայ կրոմլայի աղ-
դիւրներուն քով, և ժայռերը կը զողան բլուր-
ներուն վրայ:

Ինչպէս որ ամնկերը փոթորիկներ կը զիկեն
և կը սրողեն երկինքի կապոյար, այսպէս
զօրապեաին ձայնին՝ կը վազեն անապատին
ցեղերը. բոլոր մարտիկները կը մնաչեն մար-
դասպան ուրախովեամբ մը, և կը խոնուին
դիւցաղին շարջը, որ այնչափ անզամեր
շոայրած է իրենց՝ թշնամիին կողոպուտները :

«Եկէք, անվեհեր մարտիկներ, մահ ցա-
նելու. Փինգալ պիտի տեսնէ ձեր պատե-
րազմիլը : Ալուր՝ անկուած այս բլան վրայ,
նշան մը պիտի ըլլայ ձեզի զօրաժողովի .
Երանի՛ թէ անոր օգնութեան պէտքը չունե-
նայիք, ահա Մորնիի որդին պիտի պատե-
րազմի իմ տեղու.... ինըն է ձեզի առաջ-
նորդ, կը սիրեմ որ իր փառքը հոշակուի
մեր երգերուն մէջ :

«Իշէք, ովլ վախճանեալ դիշցաղներու
ստուերներ, իջէք ամսկերու թեթեւ հիւրեր,
իջէք ընդ առաջ իմ մարտիկներուու որ մեռ-
նելու կ'երթան: Տեղ պատրաստեցէք անոնց
ձեր ցով՝ ձեր բլուրներուն օթեւանին մէջ: Իցիւ օր մը, հեծած հովերու վրայ, կարե-
նային անցնիլ ծովերու անհունութիւնը, այ-
ցելել բունս, և միխմարել երեմն իմ ցաւերս՝
ամայի գիշերներու լուսթեան մէջ :

«Փիլլան, Ուկար, և զու, Հոնիոյ, շար-
ժեցէք ձեր գարբմանակները . աղնուական
քաջութեամբ մը հետեւեցէք Մորնիի որդույն, և
Թող ձեր սուրերը մրցակից ըլլան անոր
սուրին: Պաշտպանեցէք ձեր հօրը բարե-
կամները, և թող հին ժամանակներու մար-
տիկները՝ շրջապատեն զձեզ իրենց յիշա-
տակովը: Զաւակներս, իթէ իյնաց հոս Ե-
րինի մարդերուն վրայ, զձեզ պիտի տեսնեմ
տակաւին. ընդհուպ, փութով մեր ամդոյն
. ստուերները պիտի հանդիպին իրարու՝ ամ-

պերու մէջ, և մեկաեղ պիտի անցնինք կո-
նայի բլուրներէն » :

Նման կայծակներով բենաւոր փոմորկուս
ամպի մը՝ կը հեռանայ Մորուենի թագաւ-
որր գանգալ քայլերով: Երկու նիզակներ կը
զինեն իր ձեռքը, և իր պողպատէ սաղա-
ւարտէն ախուր բոցեր կը փայլատակնեն...
Հովուն կը ձգէ իր ճերմակ մազերը. սակա-
կը դառնայ, ակնարկ մը կը նետէ պատե-
րազմի գայախն վրայ: Երեք բարդեր կ'ըն-
կերեն իրեն, պատրաստ իր խօսքերը զիւ-
ցազներուն տանելու: Կը նստի կրոմլայի կա-
տարին վրայ. իր կայծակնացայտ տէզին շար-
ժաւումները մարտիկներուն ընթացըր կը կար-
գաւորեն :

Ուրախութիւնը կը շողայ Ռսկարի ճակատին
վրայ. իր այտերը կը գունաւորուին. աշքե-
րը եռանկուն արցունքներ կը բոլիւն . իր
սուրը կը փայլատակէ ձեռքին մէջ: Յառաջ
կը դիմէ, և ժպտերով կ'ըսէ Օսիխանին.

«Մ' պատերազմներու պետ, հայր իմ,
լոէ աղաշանքիս : Քաշուէ ասկէ, գնա Մո-
րուենի թագաւորին քով, և ցու փառք ինծի
տուր: Եթէ մեռնիմ, յիշէ սիրուհիս, գնա
միթմարէ Տոսկարի գուսարը: Վասն զի կը
տեսնեմ ահա զինքը որ ծոած է առուակին
եղերը, այտերը կրակ կարած և մազերը
ցիր ու ցան ծոցին վրայ. կը նստի շերան
բարձունքնեն և կը հասաչ Ռսկարին համար:
Ըսէ՛ անոր, եթէ մեռնիմ, որ ես գէս ի զիւ-
ցազներուն բլուրը գացած եմ, ըսէ անոր՝
որ հոգին՝ օրորուելով ամսկերս վրայ, պիտի
երթայ գնուէ զինքը փութով:

— Բարձրացաւը, Ռսկար, բարձրացուը
փութով իմ շիրիմն. շեմ ուզեր երեք պա-
տերազմը քեզի թողուր, կ'ուզեմ որ բազուկս
հնձէ շորէչ թշնամիները, և սորիեցըն ցե-
զի յաղթել անոնց: Բայց, ով որդեակ իմ,
եթէ մեռնիմ, շմոննա զնելու այս սուրը,
այս աղելը և այս եղջերափողը՝ նեղ ու միմին
բնակարանիս մէջ, և վրաս գորշապոյն քար
մը գիր: Ալ ուրիշ բան չունիմ, Ռսկար,
որդուս ինամբին յանձնելու: Կորսնցուցի
Երիբ-Ալլինը. Տրաննուիլ քննուշ զարդիկը
հնձմէ բաժնուեցաւ յախսեան» :

Այսպէս կը խօսէինք մենք, երբ Գօլի

ձայնը եկաւ հեռուէն բախեց մեր ականջին . դիւցազնը կը շողացրնէր օդին մէջ իր հօրը սուրը . կը գահավիժի մոլեղին մահուան և արիւնահեղութեան մէջ :

Երկու բանակները կը յարձակին և կը կոսուն , մարտիկ՝ մարտիկի դէմ , երկաթ՝ երկաթի : Վահաններն ու սուրերը իրարու կր զարնուին և կը հնչեն : Մարտիկները կ'իշնան : Արուենեան մրրիկ մը նման կը խոյանալ Գոլ . անցած տեղը աւեր կը ցանէ . Գործալիք ցախերուն մէջ բոլնկած հրդեհի մը նման՝ զարհուրելի է Սուտարան :

Ի՞նչպէս պիտի կարենամ յիշել երգերուս մէջ յիշատակիը այնչափ անուններու և մեռներու : Օսսիան եւս նշանաւոր հանդիսացաւ այս պատարազմին մէջ . և զուն , ող Ռուկարս , ով ամենամեծն , զաւակներէս լաւագյունը , ո՞ւրան ահաւոր էիր զու : Հոգիս զարտնի ուրախութիւն մը կը զզար , երբ կը տեսնէի սուրդ որ կը փլցընէր թշնամիները՝ նման ցորենի հասկերու :

Կը փախչին անոնք խառնափնտոր լենայի զաշտին վրայ : Մենք կը հալածենք , կը ջարդենք : Խնչպէս քարը կը խոյանայ ժայռէ ժայռ , ինչպէս տապարը կը զարնէ և կը հնչէ կաղնիէ կաղնի , ինչպէս որոտումը կը թաւալեցընէ բլուրէ բլուր իր պակացիչ փայլակները , այսպէս թակարի և իմ ձեռքէս կը թօժափէին աւեր և մահ :

Կատաղած ալիքներու շրջանակի մը պէս , Սուտարան կը պաշարէ և կը շրջապատէ Մորնի սրգին : Փինզար զայն տեսնելու , կ'ելլէ կիսովին և աէկովը շարժում մը կ'ընէ : « Գնա , Ռւլլին , ծերունի բարզոս , զնա օգնել Գոլի որ ահա կը կըի . յիշեցուր անոր իր նախնի հայրերուն պատարազմներն ու օրինակը . իրախուսէ՝ երգերուլ իր պատահ քաջութիւնը . երգերը ոգի կու տան մարտիկներուն » :

Պատկառելի Ռւլլինը կը շատապէ իր ծանր քայլերը . կը հասնի , և կ'ուզէ Գոլի այս պատերազմական երգերը .

« Խրոխան նոյզներ ծնող կլիմաներու զաւակ , տէզերու երխտասարդ թագաւոր , զուն՝ որու բաղուկը պինդ է վտանգի մէջ , որու անձիկի բաջութիւնը չի ապար երդեք տեղի ,

դուն՝ որ կ'ուզինս մահացու հարուածներ , զարկ , տապալէ՛ թշնամին . թող անանց նաւերէն և ոչ մին չդառնայ ինխստորի ափունքը : Թո՞ղ բազուկդ ըԱպայ կայծակի , աչք՝ փայլակի , սիրտ՝ ժայռ : Բարձրացուր վահանդ . միէն և միրմէ սուրդ Լոկլինի զաւակներուն կուրծքին մէջ » :

Այս երգերուն՝ Գոլի սիրտը կը բոցավարի և կը բարախէ . բայց Սուտարան կը կրկնէ իր ճիգերը . մողիզին հարուածով մը կը ջախջախէ Գոլի վահանը , և երինի զաւակները կը փախչին :

Ելաւ այն տանի Փինզար , և երեք անդամ որոտաց իր ծայնը : Կրոմլայի արձագանգները հնչեցին անով , և փախստականները կանգ առին , զէպ ի զետին խոնարհելով իրենց ամչկոս դէմքերը՝ զօրազլինին հանգէպ : Մորուենի սարսափելի թագաւորը կը յառաջէ՛ ինչպէս փոթորիկ մը ամառուան կիզիշը օրերուն մէջ :

Կը նշարէ զայն Սուտարան , և կեցած կը սպասէ անոր : Վայրագ է խոժոս աչքերով , կանգուն , կոթընած իր նիզակին , տիրագէմ և լուս , կը նմանի Լուքարի եղերը սնկուած ծեր կաղնիի մը , որուն զումօք կը հակի զետին վրայ , և որուն ոստախիտ կոնդը ճեղբաւած է վազուց կայծակէն :

Կը քալէ , և կը քաշուի ծանր քայլերով գաշտին վրայ : Իր մարտիկներէն ընափիր ընափիրները կը շրջապատէն զինքը , և պատերազմին ամազը կը կազմուի բլրան վրայ :

Փինզար կը փայլի իրեններուն մէջ , և կը իրախուսէ զանոնց շարժումով և ծայնով . « Պարզեցէր դրօշակներու . թողէր որ ծածանին լենայի հուլերուն , և շողչոզան ինչպէս բոցեր հարյիւր բլուրներու վրայ : Թող իրենց նարճատումները օգին մէջ զմեզ պատերազմի զգունն : Վազեցէր , երինի զաւակներ , սեղմուեցէր ծեր թագաւորին շուրջը , ուշադիր եղիք իր հրամաններուն : Գոլ , անյաղթիլիք բազուկ մահուան , և զու , զետածայիկ խնկար , մարտի զաւակ , կորովի կոնալ , Դերմիդ թիահիր , և զու , Օսսիան , երգերու թագաւոր , եկէք պատսպարուեցէր Փինզարի վահանին ներբեւր... » :

Կը պարզեն Մորուենի արեգակնաւ-

նշոյլ՝ փառապանծ զրօշակը. դիւցաղներուն հոգին կը կայսու ցնծութեամբ ի տես յաղթութիւններու այն նշանին. Այնպականացնյին վրայ ցանուած էր սովի, նաևն դիշերային կապոյշ բօդի մը՝ փրթած աստղապար երկնից կամարէն. իւրաքանչիւր դիւցաղն ունէր իր զրօշակը, և իւրաքանչիւր զրօջի տակ կը յաստիչ մարտիկներու խումբ մը:

«Տեսէք, ըստ մեծ զօրավարը, ինչպէս Լոկինի բանակը կը փեռեկի զաշտին վրայ. կարծես անտառ մըն է կաղնիներու կիսովին այրած հրդեհէն, երբ իրնց լուսաւորուած ծառեցը կը ցուցնեն մէջ ընդ մէջ երկնիցի տարածութիւնը և գիշերուան մէջ թուզող օղերին յիշները. թող Փինզալի բարեկամներուն իւրաքանչիւր պետք ընտրէ և յարձակի թշնամի խումբի մը վրայ. թող ջախջախէ աննոց սպառանցող ճակաար, և շմօղու որ անոնցմէ և ոչ մէկը կարենայ իր նաւն հասնիլ:

— Ես ըստ Գօլ, կը յարձակիմ հօթը զօրավարներուն վրայ որ եկած են Հանոյի լինէն:

— Թող ինխսորի խոժոռապէմ թագաւորը, ըստ Ռսկար, գայ Օսսիանի որդույն սուրբին:

— Ինձի տուէք ինխսորի թագաւորը, ըստ երկաթասիրու կանալը:

— Մուտան կամ ես, ըստ Դիերմիդ, պիտի քննանայ այս իրիկուն երկրի տակ:

Ես ես, որ հիմայ կոյր իմ և տկար, ընարեցի ֆերմանի պատերազմիկ թագաւորը: Խօսուացյ ես չգառնալ առանց անոր վահանին:

«Դիարձէք յաղթական և յաղթող, ով գիւցաղներու, ըստ Փինզալ զոհ նայուածցով մը. ես, Սուռարանը պիտի զարնեմ»:

Այսիջապէս, ինչպէս հազար մոլեգին հովիր որ կը փրթին ձորակներու վրայ, մեր չոկասները կը բաժնուին և կը խոյանան թշնամին վրայ. Կրոմլայի արձագանկները կը հնչեն հռուս:

Ինչպէս պատմել այն ամէն հոյտակապ քաղագործութիւնները որ նշանաւոր ըրին մեր դէնքերը այն ահաւոր խառնութիւն մէջ: Մը զուսար ծոսկարի, մեր ձեռքերը բոլոր արիւնազանդ էին. Լոկինի գոռոզ գունդերը իրարու վրայ կը զլորէին, նաևն կոնայի լեռնէն փրթած հոդերուն: Յաղթութիւնը հետերնիս էր. չեզու զօրավար մը որ չկաարէր իր խստուամբ:

Դու նստեցար շատ անզամներ թրաննոյի ջուրերուն քով, ով դուստր ծոսկարի. Կուսական ծոցդ կ'եւլէր ու կ'իշնէր՝ նման կարտափի փետուրներուն մըր կը նաւարիէ մեղմով լիճին մակերեւոյթին վրայ երբ զեփիւնները կ'ուստեցնեն իր թեւերը: Հնու տեսար գուն մէկէ աւելի անզամներ՝ որ արեգակը քօղարկւած սոկեղէն մասախուղով կ'իշնէր գանգազորէն կարմրորակ ամպերուն ետեւր. տեսար գուն՝ որ գիշերը՝ կը զիշէր իր սուռերները լեռն շորդիլ. երբ հովը կը գչէ մըրկախան, կը մնաչ և կը շարջարէ խոր հովիւններու արձագանգները, կարկուտը կը թօթափի, օրուառմը կը թաւալի և կայծակը կիր կը զարձնէ ժայռերը: Ոգինները կը հեծնեն բառագայիններու վրայ. աեերիշ հեղեղներ կը խուժեն լեռներէն յորգահոս ալիքներով: Այսպէս կը մնաչէր, ով Մարլուինա, պատերազմի սպին, այն աղետաւոր օրուան մէջ:

Ինչն կու լաս, Մարլուինա, ինչն թող Լոկլինի աղջիկները լան: Հեռաւոր երկրին մարտիկները կ'իշնային բիւրաւոր, և արիւնը կարմըրցուցած էր մեր դիւցաղներուն երակմէր:

Բայց ես ալ չեմ ընկեր, աւաղ, դիւցաղներու, ծեր եմ, կոյր և անտերուն: Ինձի պահէ, ով Մարլուինա, ինծի պահէ բոլոր արցուններդ, վասն զի շրջապատուած եմ բոլոր բարեկամներուս գերեզմաններով:

Այն ատենն էր որ Փինզալ ցաւու տեսուանձնամօթ զիւցազի մը իր հարուածներուն տակ զլորիլը: Մարտիկը կը թաւալէր փո-

1. Փինզալի դրօշակը կը կոչուէր Արեգակնաշանի (Ճահանչ արեգական), անշուշտ իր

շին մէջ իր զորչ մազերը, և իր օրհաս-
սական աչքերը իր վերցրնէր առ թագաւորը:

« Մէ՛, ուրիմ գուն իմ ձեռքէս կր մեռ-
նիս, կ'աղաղակէ Փինդալ՝ ճանչնալով զանի,
ով բարեկամէ Ազանդեկիայի: Տիսայ ես քու
արցունքներուկ հոսիլը իմ սիրուհիս հա-
մար՝ արինուուշ Ստարնայի կամարներուն
աակ, թշնամի եղար գուն սիրուհիս թշնա-
միներուն, և իմ ձեռքէս է որ կը մեռնիս:
թարձրացուր, ով Ուլլին, բարձրացուր Մա-
թոնի որդույն գերեզմանը, և խառնէ երգե-
րուու մէջ իր անունը Ազանդեկիայի անունին
հետ, այն կոյսին՝ զոր կը սիրէ և զոր կու
լամ տակաւին ամէն գիշեր»:

Կրոյշայի անձաներուն խորէն, կը լսէր
կուկուլին պատերազմնիներուն շոյնքն ու
շառաց: Կանչեց կորովի կոնսալն ու ծերոսնի
կարրերը: Իր ձայննս երկու ալէծաղկի զիւ-
ցազները առնի իրենց աէկերը: Ասաշ զայն
և տեսան հնուուն պատերազմին արինէր որ
կը ժիար նման մըրկակոծ այինքներուն, երբ
ծովան հովերը կը թաւալին իրենց առջեւն
ալի ջորին ծփանքները՝ ափունքին աւազ-
ներուն վրայ:

Զայն տեսնելով, կը բոցավոսի կուկուլ-
լին և կը պարսէ յօնքերը. իր ձեռքը կը
բռնէ և կը ճօնէ իր հայրերուն սուրը. իր
աչքերը՝ մահաւան փայլակը կը շանին
թշնամին վրայ: Երեք անզամ կ'ուզէ փազել
գէպ ի մարտ, և երեք անզամ կոնալ կը
զապէ անոր եռանզրու:

« Մէ՛ Մառախաւզնիներու կողիին պետու, կ'ըսէ
անոր, Փինդալ կը յաղթանակէ. մի ծանար
իլլել մաս մը անոր փառքէն, ան կ'աւերէ
և կը գերփէ փոթորկի նման:

— Լաւ ուրեմն, կարիի, յարեց կու-
կուլ, զնա ինդակցելու Մորուենի թագա-
ւորին: Երբ լոկիլինի բանակը ցրուի ինչպէս
կեղեղը անձեռւն ետքը, երբ լուսիինը թա-
գաւորէ պատերազմի զայսին վրայ, զնա....
թող քու քալցրանուագ ճայնդ լսուի Փին-
դալէն և երէ իր զովեսաները: Տաք իմ
կողմէս կայիթթատի սուրը, զան զի կու-
կուլին արժանի չէ այլ եւս իր հայրերուն
զէնքերը կրելու:

« Մէ՛ մենակեաց սուուերներ կրոյշայի,

վախճանեալ զիւցազներու ողիներ, այսուհե-
տես կուկուլինի ընկերները եղիք, և խօսե-
ցէք անոր երբեմն այն անձաւին մէջ՝ ուր կը
ծածէք ան իր վիշարը: Ոչ, ալ նշանաւոր
պիտի չըլլամ՝ երեւելի մարտիկներուն մէջը:

« Փայլեցայ լուսեղէն ճառագայթի մը պէս,
բայց անցայ անոր նման, անհետացայ նման
շոպիներու՝ զոր կը ցրուեն հավերը, երբ ար-
շարոյսը կու գայ բրուրները լուսաւորելու:
կոնալ, ալ մի խօսիք ինծի զէնքերու և պա-
տերազմներու վրայ. մեռն իմ փառը:

« Միաս բարտվ, կ'երթամ հեծել հեռաւն
մինչեւ որ սորերուն հետքը չնչուի երկրէն...
Եւ զու, գեղեցիկ Բրագելա, լաց համբաւիս
կորուսալ. վասն զի երբեք պիտի շգանամ
շեզի. յազթուեցայ»:

Թարդմ. Հ. ԱՐՈՒՆ ՊԱԶԻԿԵԱՆ

♦♦♦♦♦

ՀՈՌՄԱՅ ԱԻԱՐԱՌՈՒԻԹԻՒՆԸ

ԳՈԹԱՑ ԱԶԳԵՆ

410 ՏԱՐԻՈՉՆ ՄԷջ

(Ծար. տիս յէջ 410, 1901)

Աւարենասի յայս պարապի եղաւ, այն ո-
րեն հոսու ի Խավեննա Սարոս դժթաք նշա-
նաւոր զարգարն, որ մահու չափ կ'ատեր զԱ-
ւարեկոս, և երեխարիւը կարէն զէնուուներով
յանկարծակիք բերելով Ասաւէլիոսի զրքն՝
բաւական ջարդ տուու: Խմացաւ թագաւորն
որ կայսերական արքունիքն կ'ուզէն ժամանակ
վասուըիէ, և վրէ ժեննդրութեան ուզուվ չեցուան
Խովենայէն հնասանկով քանակը, քէց առ-
սու երազութեամբ զէպ ի հառն, ցաւեկով այն
չափ երկար ժամանակ հրաւախանօւթեան ան-
պատ և անարդիւն փորերով վատնելուն
համար:

Քաղաքին մերձակայ ըլուրներէն հանք և
Գութք անյաշութեամբ կը նայէին, անհամբե-
րաբար կը սպասէին աւագաւութեան ժամին
հնէլուուն, և Թագաւորն փախանակ խաղաղե-
լու զաննէք, տուուել եւս կը դրգաքը: Վատի-
կանի շըլանակին մէջ՝ որ իրենց առջեւն էր,
վայրադ մարտիկները կը անոնէին Ա. Պետրոսի